



Պատմաստանատու
Յովհաննէս Փիլիսեան

ՕՐԱԳԻՐ ԶՄԻՒՆՈՒՄ

Նամակըն ուղղելի են
առ. Ղ. Գ. Պալապարեան

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԶՄԻՒՆՈՒՄ ԵՒ ԲԱՐՔ 24 ՆՈՅԵՄԲԵՐ 1879

ԹԻՒ 1132

ԱԶԳԱՅԻՆ

(Շարունակութիւն եւ վերջ : Ս. Հօր ճառքից :)

Հոս Զեր որդւոցն և ընտանեացն հետ յա-
ճախ յարտերութիւն ունեցող և հոգեւոր մա-
տակարութիւններ Զեր մէջէն շատերուն պէ-
տմունացեալ հայրեր են և զաւակներ ունին :
Հոս ընդարձակ դաշտ է աշխատելու. ընէք մեր
եղբարց որ գան միանան մեզի, ձեռք ձեռքի
տան, վաստակինք, քրտինք թափենք մեր հայ-
րենի երկրին վրայ : զի «Հունձք բազումք են և
մշակք սակաւք» : Օտար երկրի մէջ և օտար
երկրի տակ կ'հայկին և կ'ծիւրին մեր հայրենի
բոյսերը : Ինչ գեղեցիկ հանճարներ անօգուտ
անցած, ինչ ազգամէր սիրտեր կան այսօր, որ
այս տունէն հեռու բայց այս տան համար կը-
բաբախեն, ազգաց Ովկիանոսին մէջ կ'աներե-
ութին և կ'անհետանան անոնք որ կ'բաժնուին
այս տունէն : Ո՛ր են լեհաստանի բազմաթիւ
Հայերն, ո՛ր եւրոպայի քաղաքաց Հայ բնակիչ-
ներն, ո՛ր կերթան Հունգարիոյ պատուական
հայերը, ըսէք որ գան միանան մեզի, աշակցին
մեր ճգանց և աշխատութեանց : Դպրոցներ բա-
նամք, բացուած դպրոցներն յառաջանենք,
ուսումն և գիտութիւն և արհեստ և այլն. ծաղ-
կեցնենք : Թող բնկերական և ազգային հոգին
գործանայ ի մեզ, և փոխանակ միմեանց հակա-
ռակ և անշատարար գործելու, և մեր անհա-
տական ոյժերն իրարու դէմ գործածելով սպա-
ռեցնելու, մեր գործութիւններն ամփոփեմք ի
մի, և ազգին միահաղոյն յառաջագիմութեան
համար գործածենք զանոնք : 40—50 տարուան
պիտուր փորձն զմեզ բաւական լուսաւորեց,
տեսանք աչքերնուս առջև որ մեզմէ աւելի եմ
մնացած ազգեր՝ մեզմէ աւելի յառաջ գացին և
մեք շատ ետ մնացինք, քանզի իրարու դէմ
մտքաւեցանք և զիրար կործանել աշխատե-
ցանք : Այո՛, ալ պէտք է գան և միանան մեզի
հետ, և դուք որ այսօր միացաք, ազգասիրա-
կան մեծ գործ կատարեցիք : Դուք կրօնափո-
խութիւն չըրիք, այլ ձեռն տուէն եկաք : ուր
ծնած ու սնած էին Զեր հայրերը, զՁեզ պիտի
օրհնեն Հայաստան, Դարք ապագայ և Աստուած
հայր Միութեան : ԶՁեզ կ'օրհնեմ և ես յանուն
իննչեւոր դարձց արեւմտեւ նահատակեալ ա-
մենասուրբ Հայաստանեայց եկեղեցւոյ : Եւ յա-
նուն Զեր չորս միլիոն եղբարց կրեմ' ձեզ : Բա-
քի եկայք, հազար բարի : Եւ մեր միւս բացա-
կայ եղբայրներն բարով գան հազար բարով :

ՈՒՂԵՐԶ

Դերասաններ Օրմանեան Մարգարէ

Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայր,
Յանուն իմ և ի դիմաց ինծի հոս եկած ան-
ձանց, և այլոց որ բանաւոր պատճառաւ մը
գալ խափանեցան, և ընտանեաց և զաւակաց
նոցին, որոց ամենեցուն անունները մասնաւոր
թերթի մը վրայ գրուած Զեր Բարձր Սրբազ-
նութեան կրօնեկայացեմ, պատիւ ունիմ յայ-
տարարել թէ ամենքն ալ յօժարակամ կըն-
դունիմք այս վայրկեան մեր վրայ Հայոց Պա-
րիարքարանի կատարեալ իրաւասութիւնը Զեր
Բարձր իշխանութեան հովանաւորութեան ներ-
քն, և բարձած կըհամարիմք այն ամեն կրօնա-
կան և քաղաքական խտրութիւններն, որոնք
ցարգ զմեզ հեռու բաժնած կ'բռնէին Հայ Ազ-
գութեան կեդրոնէն, և կ'սնդրեմք որ հրամա-
նէք որպէսզի մեր անուններն ալ օրինաւորա-
պէս արձանագործին Պատրիարքարանին մեծ
առւարին մէջ :

Պէտք էր որ բոլոր հայազգիք միասին և միա-
բան մի մարմին, մի հասարակութիւն և մի ե-
կեղեցի ըլլային միշտ, բայց մեր խեղճ ազգին
թշուառութիւններէն մէկն ալ այս է որ մտա-
ծեցին և արտաքուստ սպրդած պատճառաց
համար զանազան մասերու բաժնուեցան, և
թէպէտ բուն մարմնայն գոյութիւնը չփտանգե-
ցաւ, բայց ոչ այսու թեթեւ ինչ է որ մասնաւոր
բաժնիներ մասնաւոր ուղղութիւններ ստացան
և հակազգային դիտմամբ ազգամիջա գործոց
ալ ձեռնարկեցին :

Ոչ այսօր է Սրբազան Հայր, որ ազգային և
ազգանէր ըզձից բոլորք կ'զգամք մեք որ առ-
ոտս Սրբազնութեան մեր որոշողութիւնը կը-
յայտարարեմք : Շատոնց այդ կրակը մեր սրտին
մէջ վառեցաւ, և որչափ հնար էր մեզ աշխա-
տեցանք և ճգնեցանք որ այդ ըզձից յագուրդ-
մը տամք՝ առանց շատ աշխույժի իրաց վիճակը
զարժանելով առանց մեր կամաց ստեղծեր էր :
Մեր նախնիները ծանօթ է Զեր Բարձր Սրբազ-
նութեան և Պատուարժան ազգայնոց որ Զեր և
մեր շուրջը բոլորած են, ներեցէք որ ծանօթ
իրեր նորէն չիրկնեմ այնքան մեր բարեսիրտ փոր-
ձերուն շրջանը աւարտած է, համարձակ կու-
գամք կանոնաւոր մեր ըզձից պարզ բացայայտու-
թիւնը, այնչափ աւելի համարձակ, որչափ ան-
խորհալի սրտի և հաւս տարիմ վաստակողի
վկայութիւնը կ'զգամք մեր խղճին թագնութե-
մէջ փորձն ալ մեզի ցուցուց այն համարութիւն-
նը, թէ ով որ անկեղծաբար ազգասիրութեան
հետեւի է և ազգօգուտ գործոց հետամուտ,
պէտք է որ ազգային կեդրոնին հետ միացեալ
և անոր եմթարկեալ իշխւոյ ըստ ամենայնի : ազ-
գային կեդրոնէն դուրս ազգասիրութիւն մը
ազգասիրութեան կերպարանն է, և արդիւնա-
ւոր չէ : Ահա Բարձրաշնորհ Հայրապետ, մեր
նրաին անկեղծաւոր յայտարարութիւնը, ահա
մեր հաւատոյ անկեղծաւոր դաւանութիւնը :

Ուրախ ենք որ մեր այս յայտարարութիւնը
և դաւանութիւնը Զեզ նման Ազգասէր և Հայ-
րենասէր Պատրիարքի մը կուղղեմք որ ոչ թէ ի
պաշտամանէ միայն կրնեկայացնէ մեզ Հայու-
թեան կեդրոնը, այլ որ գործով և արգելա-
մանաւորած է յինքն Հայութեան բազմը և
անգագայն : Դուք, Սրբազան և ամենասիրելի
Հայր, դուք առաւել քան զամենայն ոք ի միտ
առիւք Հայուն թշուառութիւնները : և ոչ նը-
ւազ Զեր մտադրութեան առարկայ ըրիք ար-
տաքին հարստահարութիւնները քան թէ ներ-
քին բաժանումները և եթէ Զեր բազմանքն և
ջանքն, աշխատանքներն և զոհողութիւններն
իրենց կատարեալ արդիւնքն ստացած ըլլային,
մարթ էր ըսել թէ այսօր առաջիններն ինչպէս
և վերջիններն անհետացած պիտի լինէին : սա-
կայն գարաւոր զեղծմամբ արմատացեալ չա-
րիք չեն կրնար նոյն հետայն ջնջուիլ : Բարձրեմն
Աստուած, նա որ իւր անքննելի նախախնամու-
թեամբ պահպանեց Հայուն ազգը և Հայուն ե-
կեղեցին բազմադարեան տառապանաց անգըն-
դոց մէջ, նա որ փորձանքները կրնե՛ք մինչև
փրկութիւնը կըպատրաստէ, յուսոյ նշոյլները
ծնուել սկսաւ, մեք ալ մեր գործով և մեր օրի-
նակաւ կըփութեմք չարիքներէն մին բոլորելու
ճանապ բանալ, որպէսզի և միւսոյն բարձման
աշխատակից և գործակից ըլլամք : Վստահու-
թեամբ կըսեմ թէ ոչ մեզմով կաւարտի միու-
թեան և միաւորութեան հետամուտ եղողնե-
րուն շարքը, ուրիշներ ալ կան մեր ետեւէն և
ոչ քան զմեզ նուազ զգացեալ ազգասիրական
ըզձիք : Իցիւ թէ այդ շարքը Հոգեւոր Բայց
եթէ՛ երբ որ Հայազգեաց թիւը լրանար և ա-

մենքին որք լուսաւորեալ լուսաւորեցան, լու-
սաւորեան հօտը միութեամբ լուսաւորէին :

Ահա, Հայրք Ազգիւ, Ներսիսեանց անուանա-
կիցդ և հանգիստապատիւ, ամբարձ սուրբ Աջգ-
որով Հայաստանեայց փրկարար դար մը պատ-
րաստել ձեռնարկեցիք, օրհնէ մեր անկեղծ
բազմանքը, և սիրալիր ընդունելութեամբ
միութեան սիրտերը, զըրացուր զմեզ տեսաւա-
ւանդ օրհնութեանը շնորհիւ զիս ի մասնաւորի
որ օրոյ Հայաստանեայց եկեղեցւոյ կարենամ
իսիւ մշակ առանց ամօթոյ, որ ամենքն ալ
ապրիմք և գործեմք մի և անբաժին մարդկու-
թեան ասպարիզին մէջ հովանեաւ և ընդ հով-
ուութեամբ Ամենա Ս. Պատրիարք հօրդ :

Երանգիւն Էֆէնդի Խոսած ճառը,

Սրբազան Հայր,

Ազգային երեսփոխանական ժողովոյ վսեմա-
ւորեալ պատիւ ճարտար բանախօսութեան ետ-
քը, իմ խօսք առնելու աւելորդ պիտի ըլլար :
Եթէ Զերք բարձր Սրբազնութեան հրամանը
զիս չղարտաւորէր բանիւք ևս մասնակցիլ այս
պատուական հանդիսին, որ վսեմացաւ Զեր
նրաւորութեան պերճախօս տեսնարանութեամբը :
Կ'փութեմ ուրեմն ազգային Պատրիարքարա-
նի իրաւասութեանը դիմող մեր պատուական
եղբարց ցանկին մէջ նշանակեալ անձանց զգաց-
մանը վրայ Զեր Սրբազնութեան ունեցած կար-
ծիքն որչափ իրաւացի ըլլալը հաստատել :

Ես ինքս շատերուն հետ ի վաղուց սերտ մը-
տերմութիւն ունեցած ըլլալուս պատճառաւ,
խղճի մասք կրնամ վկայել իրենց գիտեցմանց
անկեղծութեանը : Այո, Սրբազան Տէր, մեր
այս պատուական եղբարց շատերուն հետ դրե-
թէ 20 տարիէ ի վեր ի միասին աշխատեցանք :
Կը յիշատակեմ մասնաւորապէս Ազնաւոր Է-
ֆէնդիս որ իւր ազգասիրութեամբ փայլեցաւ
միշտ, և երբ ես սկսայ ազգային գործոց համար
աշխատիլ, իրմէն առի մարդասիրութեան ա-
ռաւիյն գաւոր, որ իբրեւ հայր՝ կառաջնորդէր
այն տոներ իրաւասորութեան :

Ոմանք մեր յիշատակաց արժանի բազմա-
դիւն Պէշիկի աշխատի գործակիցներն կամաշա-
կերաներն են ինձ նման, երբ նա իւր քնարին
կամ թատերաբեմին վրայէն մեզի կ'քարոզէր
թէ «հոգ ինձ քու ձեռքը եղբայր եմք մեք որ
միւրկաւ էինք զատուած» մըրկը փոխանակ
դադրեցաւ : Ինչպէս փոթորիկներու տեղի տը-
ւաւ դժբաղդաբար, և այդ տագնապալից օրե-
րուն մէջ իրենց և իրենց նմաններէն շատե-
րուն հետ ձեռք ձեռքի տալով աշխատեցանք,
մէկ տեղ ցանցեցինք, մէկ տեղ հոգեցանք,
մէկ տեղ լացինք և անշուշտ մէկ տեղ պիտի
խնդամք այն բարեաց վրայ որ վաղ կամ անա-
գան պիտի հնձուին երբ Զեր Սրբազնութեան
ներշնչած միութեան ոգին ամեն ազգայնոցս
սրտին մէջ անխտիր տիրապետէ, ինչպէս որ կը
յօւսամք :

Յառաջընթաց ճառախօսութիւնները հրատա-
րակելէ ետեւ, քաղցր պարտաւորութիւն մը կը
համարեմք մեզ հրապարակային շնորհակալու-
թիւններ ուղղել ճառախօսից, մանաւանդ Ս.
Պատրիարք Հօր, որ ճարտարաբար բացատրած է
վերադարձող եղբարց բացակայութեան պատ-
ճառները և իրենց հայրենի տունը վերադառ-
նալուն օգուտներն ու քաղցրութիւնները :

Մայր մը որքան ալ օտարօտի թուի իւր զա-
ւակին սկզբանց և ընթացից, դարձեալ իւր սի-
րելութիւնն ունի զըր գաւ կուտայ մեզ բնու-
թիւնը :

կրօնի ազատութեան սկզբունքը մեր ամենեւեալի յարգած բաներէն մին է, սակայն քանի որ մեր ազգին մէջ, գեաւ կրօնի տարբերութիւնն ու ազգային միութիւնն իրարու հետ անհաշտելի ըլլալ կը կարծուին (թէ և որով դաւար մը եղած լինի) այլ այդ է որ աւելի սերտ կապ մը կուտայ միութեան: Որքան երկնային պիտի ըլլայինք եթէ ամեն կրօնի վերաբերող Հայ թողլով հանդերձեալի հետ ունեցած իր հաշիւը իւր խղճին, դար միանար միեւնոյն քաղաքային իրաւասութեան ներքեւ... բարէ, բնութիւնն իսկ կարծես կընդդիմանայ ասոր, ամենեւեալ լուսաւորեալ տէրութիւնք և դիմաւորեալ իսկ հակառակ կ'երեւին այս սկզբունքն, թէ և կը քարոզեն, բայց չեն դորձադրէր չեն ուզեր դորձադրել տալ: Անդին և Ամերիկա կ'իրաւացնեն մեր բողոքական եղբայրները, Յոննաս և Վատիկան նոյնպէս կ'իրաւացնեն մեր պապական եղբայրները: Այս իրացումը, որոյ երես տալ և շահիլ կը տեսնուի, ամբարշտակ մը կը կանգնի մեր բաղձանաց դէմ, սակայն յանամբ մեք այդ թուով խորտակելով ազգային ընդհանուր միութիւն մը կազմել, փութամբ լրագիրքս ասոր իրականութեան դիմադրեալ համար ծրագիրներ մտածել և հրատարակել, որով ամեն կրօնի վերաբերող Հայ հասարակութիւնն համադրուի, և ազազային մէջ թողազգը ուրիշ ձև մը ունենայ աշխարհիս քաղաքական կացութեան մէջ:

Բարիկի մէջ հրատարակուող Լա Բաբլի և ԼԵ Սօսը լրագիրները հետագայ յօդուածը կը հրատարակեն գերա. Խորէն Նարայէյ Լուսինեանի վերջերս ըրած ճամբորդութեան վրայ:

«Ըստ Թայմս», կըսեն յիշեալ թերթերը, Պէշիկթաշի քարոզիչ գերա. Խորէն Արքեպիսկոպոս Լուսինեան վերջին օրերս Կ. Պօլսէն մեկնեցաւ յատուկ պաշտօնի, զոր յանձնարարած է իրեն Հայոց ազգային ժողովը Բ. Դրան վաւերացմամբ:

«Սոյն պաշտօնին գլխաւոր առարկայ է ստուգել թէ, Պէշիկթաշի վեհաժողովը պահանջած կրօնական թոյլտուութիւնը մինչև որ աստիճան արդեօք դորձադրուած է ի Ռումանիա և այլուր գտնուող Հայոց մէջ, նաև յերոսոյա ցրուեալ ղանաղան Հայ հասարակութեանց մէջ եղած յորաբերութիւններն աւելի ամրապնդել:

«Միւս կողմանէ Մօնթէն Բօնի կըսէ թէ, Նոյնին արքայական վսեմութիւնք իշխանուհի և իշխան Լէոն Լուսինեան ի Լիւտրա իրենց բնակարանն հասնէր են (Հարինկիթըն Մէնչըն Գուլինս Կէյթ) ուր կը ստանան խորէն եպիսկոպոս:»

Դարձեալ Լա Բաբլի և Լա Պրաւսը քարոզիչները կ'իմացունեն թէ ամսոյս 13ին (Ն. Տ.) իշխանուհի Մարի Նար Լուսինեանի աղաբանքին մէջ շնորհ նուագածութիւն մը կատարուէր է, ուր իշխանուհին զմայլելի ձայնը ունենցեաց զարմացումը գրաւէր է:

Սուրբ Էջմիածնի Արք. ամսագիրը հետեւեալ լուրը կուտայ, որմէ կրնամք իրաւամբ համոզուիլ թէ որքան մեծ են վեհա. Հայրապետին ազգասիրական զղացումները: Նորին առաքելական վեհափառութիւնք ցոյց կուտայ այսու թէ, իւր փառքն է միշտ իւր ազգին մէջ կրթութիւնն ու լուսաւորութիւնը տարածել ճեմարաններու և դպրատանց վերանորոգութեամբ և շինութեամբ:

Վեհափառ կաթողիկոսը, շնայելով իւր ծանր տկարութեան, չնայելով ոմանց այն սարսափելի տգիտութեան արգասիքին, որի ակնատեսն ենք մենք անբարդաբար, դարձեալ դործունէութեան հիմնային օրինակ և դաս կուտ և փքրկութեան ճանապարհ կհարթէ և կը լուսաւորէ մեր տօնելի Հայրապետ խեղճ Հայ ազգին, առանց վնասութեան և յուսահատութեան փափագելով և հոգալով հայկական ազգի բարոյական և մտաւորական պէտքերը: Իւր խօսքի համաձայն նա սրտաւիրեց մի կողմից ճեմարանի նոր նշարանի շինութիւնը սկսել, միւս կողմից հրամայեց իւր հօգուտ որդի Խորէն վարդապետ Ստեփանէին գնալ առաջապահ Հայերն և հաս-

կացնելով վեհա. Հայրապետի ձեռնարկութեան վսեմ նպատակը, նոցա հրաւիրել օժանդակութեան: Էջմիածնի մէջ շինութիւնն սկսելեցաւ և շնայելով կարճ ժամանակին և անլսելի թանկութեան, շինութիւնը բաւական յառաջ գնացած է: Մինչև Սեպտեմբեր ամսի 20ը եղած է ծախս շինութեան վերայ, որ ունի հիմերից 10 արշին բարձրութիւն, 124 արշին երկարութիւն իւր 14 սիւներով և 22 արշին լայնութիւն և բոլորը սրբատաշ քարից է, 27,489 մանէթ 52 կօպէկ: Իւրաքանչիւր օրը կաշնատեն 60 քարտաշ, օրական 3 մ. և 2 մ. 50 կ. և 150 մշակներ երբեմն աւելի ևս, օրական 40 կա: Կերը կընվէր 10 մանէթով խալիւրը (30 պոլզ): Միւս անգամ, երբ բոլոր աշխատութիւնը վերջացած կլինի, եղած ծախսերն յօդուածներով հրատարակելու ենք առաւել մանրամասնաբար:

Իսկ Խորէն վարդապետը պաշտելով վեհա. ազգային Հայրապետի սուրբ հրամանը այցելեց, Գեորգեան ճեմարանի ամառնային արձակուրդի միջոցին, երկու ամիս ընթացքում, քանի մը քաղաքների Հայերին և իւր ճանապարհորդութեան արգիւնքը առանձին յայտարարութեամբ ներկայացրեց վեհա. կաթողիկոսին, որ տպւելու է Ալլարատի միւս տեղակալում, նոյնպէս և նըւախատուների ազգանունները: Այս անգամ բաւական կհամարվի յայտնելու, որ Թիֆլիսում կազմվեցաւ Մամաժոնով և սորա հայտնէր անդամներն պարտաւորեցան վեհա. Հայրապետի առաջ նշանաւոր գումար մի հանգանակել թիֆլիսի մէջ: Իսկ Վլադիկաւկազի, Արմաւիրի, Մօսկվայի, Նիժնու տոնաւստանի գտնված և Պետերբուրգի Հայերն ամենայն համալրութեւ արձագանգ տուին վեհա. Ազգապետի հայրենասիրական կանչին և նուիրեցին յօդուած ճեմարանի շինութեան մօտ 10,000 մանէթ: Իսկ Նոր Նախիջևանի մէջ սկսվեցաւ հանգանակութիւնը և կը շարունակվի, պատուական քաղաքացիութիւն խոստանալով առ նուազն 1000 մանէթ հանգանակել:

Ս. ԱՅՈՈՒՈՑ ՈՒՇԸ ԿԸՀՐԱԽԻՐԵՄԲ

Ամիս չանցնել արդարեւ որ Հնդկաստանի ազգայիններէն տրտունջ չըբեմք, իրենց առաջնորդ գերա. Գրիգորիս եպիսկոպոսին գէմ. Զարմանք կ'իմանամք մեր արժանահաւատ թղթակիցներէն, թէ վեհա. կաթողիկոսը ի սկզբանէ անտես մնացած է այս խնդրոյն մէջ. քանիցս բողոքադիրք կ'ուղղեն Ն. Վեհափառութեան իւրեանց առաջնորդին պաշտօնականութիւնը խնդրելով, առարկելով որ անոր ներկայութիւնը մեծամեծ աղէտից տեղի տուած է և կուտայ Հնդկաստանի Հայոց մէջ, Պատմաւորներն արդէն հրատարակած ենք Արշալուսոյ մէջ, բայց սա կէտը ևս չենք ուզէր լուսնեան տակ պահել, որ Նորիւղայու հասարակութեան մեծ մասը Լուսնեան կրօնքն ընդգրկէր է ի շնորհս գերա. Գրիգորիս եպիսկոպոսի: Մեր սկզբունքն ի վաղուց անկողնակալութիւնն է թէ և, բայց իրաւամբ կրնամք ըսել որ խաղաղարար և ուղղութեայ առաջնորդի մը հովուած ժողովրդեան մէջ երկպառակութիւն չծագիր երբեք և, որ աւելի ցաւալին է, կրօնափոխութիւններ տեղի չեն ունենար, այս կէտը բոլորովին կ'արդարացնէ մեր թղթակցաց բողոքները, որքան ալ կողմակալութեամբ գրուած համարուին վայրկեան մը: Այսպէս ևս ինչ է սուրբ Աթոռոյն և Սիւնհոտի անտարբեր կացութիւնն առ բողոքանք Զուգայարմակ Հայոց, ինչ է պատճառ որ Սիւնհոտի անդամներէն մին կը գրէ առ Զուգայեցի թէ Սուրբ—Աթոռ չէ կարողացած զԳրիգորիս համոզել որ թողու զՀնդկաստան... այսքան անաղիքութիւն, լսեցէք: Զարմանք չէ միթէ որ կեղծոյն չկրնայ իր ստորակարգ ելաց վրայ իշխել... իսկ եթէ վայրկեան մը մտածեմք թէ մեր թղթակիցները կեղծու կը գրեն մեզ, թէ Գրիգորիս եպիսկոպոսի կառավարչը, (որք աղամանդեայ մատանիով շքաւորէր են զինքը), իրաւացի են, սակայն կրկին պարտաւոր չէ արդեօք Սուրբ—Աթոռ անմիջապէս հրաժարեցնել Գրիգորիս քանի որ այսպիսի ցոյցերով ժողովրդեան երկպառակութիւնն առ ա-

ռաւել կըծաւալի, հակառակութիւնը կ'արմատանայ, և անոր աղաքաւ Հայաստանեայց եկեղեցին իր զաւականց կորուսող կըտեսնէ, և աւելի ծանր, կրօնի փոփոխմամբ հայութեանեայ կորուստն աներկբայելի բան մ'է Հնդկաստանի մէջ... Թէ և Գրիգորիս սրբաղան բարեմիտ, անմեղ և բարձր հովիւ մը եղած ըլլայ...

ՆՆԻՔԻՆ

Բարձրագոյն Դուռն հետագայ յայտարարութիւնը կ'ընէ վերանորոգութեանց մասին, որ եթէ կատարելագէտ ի գործ դրուի Տաճկաստան վերստին ծնած և ոսկեգար մը սկսած պիտի ըլլայ իրեն համար:

«Կայսերական կառավարութիւնը մասնաւոր յայտարարութիւնով, արդէն ծանուցած է հասարակութեան կայսերական իրաւունք, որ պատճենից ժողովոյ մէջ հիմնական վերանորոգութեանց համար եղած որոշումը կը վաւերացնէր:

Կայսերական այդ իրաւունքն, որ երկրին բնագոյնից եղած յառաջագիւծութիւնն ու բարոյութիւնը ծաւալելու կարող վերանորոգութեց դորձադրութիւնը, Պետութեան ամեն կարգի բնակաւց կատարեալ ապահով կացութիւնը կը հրամայէր առհասարակ հետեւեալները կը պատուէրէ:

Պաշտօնէութիւնը և հասարակայ վարչութիւնը բաւագոյն կերպիւ պիտի գտնակարգուին և երկրին պիտոյից համեմատ անանկ պիտի կարգադրուին, որով կարելի ըլլայ դործերն առանց յապաղման և կանոնաւոր կերպով կատարել:

Հասարակայ պարտուց դորձակալութիւնը, որ քանի մը տարիէ հետեւ առ կախ մնացած է պատերազմական աղէտից պատճառաւ, անհրաժեշտ արոց միջոցաւ պիտի ապահովուի:

Գանձային պաշտօնէութեան գործողութիւնն ներք իրական հիմանց վրայ պիտի հաստատուին: Հողային տուրքեր պիտի հաստատուին, ագարակային և տասնորդի տուրքերը շնորհելով, որոց գէմ բողոք և արտաշ շնորհակաւ են ամեն կողմէ: Այս նոր դրութիւնն ի գործ պիտի արկանի, իբրեւ փորձ, քանի մը գաւառաց մէջ յառաջիկայ տարիէն սկսեալ:

Տրոց հաւաքման գործակալութիւնը ոստիկանութեան ձեռնհասութեան պիտի առնուի: Այս գործակալութիւնը մասնաւոր կանոնադրութիւնով մը պիտի կարգադրուի:

Առաւելներն ու հանքերը պիտի բանեցուին, նաւահանգիստներ պիտի շինուին կամ մարտիկն ինչպէս նաև ցամաքեալ լճակները, գետեր և ջրայքներ պիտի բացուին նաւարկութեան համար, հասարակայ հարստութեան աղբիւրները պիտի ծաւալին ամեն միջոցներով, և երկրին ծաղիկուն արդէք եղող բոլոր սովորութիւնները պիտի շնորհուին:

Գաւառաց ոստիկանութիւնը նոր դրութեամբ պիտի կարգադրուի: Այս մասին պատերազմական պաշտօնէութիւնը պիտի հրաւիրուի, որ պէտքի զարգիս ասոր վերաբերող զանազան օրինական դրութիւնները ընէ և կայսերական վաւերացում խնդրէ գործադրութեան:

Մայրաքաղաքին և շրջակայից ոստիկանութեան վերաբերեալ դործերը, այն պաշտօնէութեան կախեալ պիտի ըլլան, ինչպէս որ կը լայր անցելոյն մէջ, սակայն մինչև ցարեկարգութիւն գաւառաց նոր ոստիկանութեան, պատեւաբանական պաշտօնէութիւնը պիտի վարէ գաւառաց ոստիկանութեան գործերը:

Չայսից առաւելութեամբ քանի մը օտարականներ պիտի կարգուին մայրաքաղաքին նոր ոստիկանութեան կարգադրութեան ժողով մէջ: Նոյնպէս գաւառաց մէջ, պաշտօնակալ ուսուցիչի պաշտօնով, օտարականներ պիտի զրկուին:

Գաւառաց նոր ոստիկանութեան պաշտօնակալաց ընտրութեան և փոփոխութեան մասին ընդհանուր կառավարչաց իշխանութիւնը պիտի ծաւալի:

Սահմանադրութեան այն յօդուածոց համեմատ, որք Շէրիի դործերը Շէրիի դատարանաց և քաղաքական օրինաց վերաբերեալ գործերը քաղաքական դատարանաց մէջ տեսնուիլ

ճարտարներն, որնեղեւաներէ բազմաթիւ ժողով
պիտի կազմուի, որոյ պաշտօնը պիտի ըլլայ
իսկ երկու օրինական ճիւղերու վերաբերող
որոշումը և նոյնն զատարանաց ձեռնհասու-

թիւնը որոշելու :
Ի վերջոյն և քաղաքական պաշտօնականներէ
եղով մը պիտի կազմուի տաճարաց, նուիրա-
նականաց և այլ բարեգործական հասարակու-
թեանց ընծայեալ վաղըքներու վարչութիւն-

ընթացքը բարեկարգելու համար, հին կանոններն
նկատի առնելով, այլ այնպէս որ ի հարկին
արածատեքերը իրաւունք ունենան սոյն ան-
որժ կալուածող եկամտին վրայ :
Բիւջայի (նախնական) դպրոցներու յատկաց-

ալ տուրքերը բարձրագոյն դպրատանց պիտի
հատկացուին : Իսկ Բիւջայի դպրոցաց ծախքե-
րը հասարակութեան և սոյն դպրոցի վաղըք-
ներու եկամուտէն պիտի հայթայթուին : Պե-

տական խորհուրդը օրինակութիւն մը ծրա-
դրելու վրայ է այս դպրոցները վարող ժողովոց
կազմութեան համար : Դադարներէն լեզուն դա-
տարի արուի այս դպրատանց մէջ :
Սահմանադրութեան սոյն սկզբանց համեմատ,

որ ամբողջ պետութեան հայատակաց հաւասա-
րութիւն կը տրամադրէ, հասարակութեան ա-
մեն ազգի աղայք պիտի ընդունուին զինուորա-
կան Բիւջայի դպրոցներու մէջ : Պատերազմա-
կան պաշտօնէութիւնը յանձնարարուած է որ
սոյսի գործադրութեան միջոցները քննէ :
Բոլոր այս որոշումները Նորին Վեհափառու-

թիւն Սուլթանի կողմանէ վաւերացեալ ըլլալով
Դուռը արդէն հրաւիրած է զանազան վար-
չութիւններ որ գործադրութեան սկսին : Սոյն
պայտարարութեան օրինակները մեծ տէրու-
թեանց դեսպաններու հաղորդուած են Բարձ-
րագոյն Դրան կողմանէ :
Պատերազմական պայտօնէութեան մէջ Գանձ-
աւորով մը կազմուած է զօրաբանակին մէջ
արեւմտական իւրեանց ընդուն համար : Սոյն Գանձ-
աւորով որոշած է որ բարձրագոյն պաշտօնա-

տարաց և սկիզբ (թալիս) գաղաքի պատահեալ :
Իսկ զատ կարեւոր զեղծումներ ալ ըրած է,
զորոյնմէ, Սիւլթանը 12,000 զուրուշի ամա-
կան մը պիտի ունենայ, 35,000 և 1,400
3000 զուրուշի :
Կոստանդնուպոլսի մէջ քարափռուք պիտի

սկսուին : Այս քարափռուք պիտի տարածուին
Սիւլթանի երկու եղբոր վրայ, Թոփթանէն
մինչև Ազադ-Գափու, և Սարայ-Պաշուէն
մինչև Ռա-Գափու : Գաղաքի քաղաքացիները
պիտի ըլլայ 20 մեթրո, նաեւ երկաթեայ ուղի-

ներ պիտի ունենան իրենց վրայ : պիտի շինուին
նաեւ անոնց վրայ տոբակներ, խանութներ և
փարանթիւնայի ու Մաքսատան պիտի ծառա-
յող զանազան շէնքեր :
Գ Ա Ղ Ա Ք Ա Լ Ա Ն
Հեռագիրը ծանոց շարժու մէջ թէ Ռու-

սաստանի մէջ քիչ ատենէ քաղաքական վերա-
նորոգութիւններ պիտի ըլլան : Այս վերանորո-
գութեան նպատակն է վերջ տալ բացարձակ
կառավարութեան և ապահովել ազգային իշխա-
նութեան սկզբունքը նոր Սահմանադրութիւն-

ընթացքը և թէ Պ. Վալուէի կորաքօնի յա-
ջորդէ Ռուսիոյ մէջ բարձրագոյն դրութիւնը
պիտի հաստատուի և ներքին քաղաքականու-

թիւնը պիտի փոփոխուի :
Միւս կողմանէ կ'ապահովեն ընդհակառակն
թէ Պ. Վալուէի կը խորհի արտաքին քաղաքա-
կանութիւնը ամբողջովին կորաքօնի յանձնել
և ինքը Տէրութեան ծաղկելուն և արտաքին
բարենորոգութեամբ զբաղիլ :

Երկրումէն Մոնթիթօր տիւ Գոմէրի կը հեռա-
գրեն թէ Վանայ ընդհանուր կառավարին և
Պ. Քէյլիթի (Վանայ Անգլիոյ հիւպատոս) մէջ
անդ յրաւութիւններ ծագել են :

Կերեի թէ Պ. Քէյլիթն Վալիին ուշադրու-
թիւն հրաւիրած է անդոյն քրիստոնէայ գիւ-
ղայիներու ահադին թշուառութեան վրայ,
նոյնպէս այն խօստանն որ եղած էր իրենց օգ-
նելով գաղթութեան առաջն առնուելու համար :
Այս հրաւերը սիրով չեն ընդունել կառավար-
չին կողմանէ :

Պուլղարիոյ և Արեւելեան Բուլղարիոյ սահմա-
նող ծովանէ համար եղած խառն յանձնաժո-
ղով որոշած էր որ ֆարաճա-Ալի Արեւելեան
Բուլղարիոյ ծնար ֆար տիւ Պոսթօր կըսէ թէ ֆա-
րաճա-Ալի բնակիչը այս որոշման վրայ դժգոհ
ըլլալով ապստամբէր և Ռոտօր լեռը ելէր են :

Բեթէնպուրկի մէջ գաղտնօրէն Նիհիլիսթ
թերթ մը հրատարակուի սկսեալ է Նաթիլայա
Վօլէ (Ազգային Ազատութիւն) անունով : Սոյն
թերթին առաջին յօդուածը կըսէ թէ, պարա-
դանքը ուրիշ յառաջադիմութիւն մը պահան-
ջներու համար Նաթիլայա Վօլէ-Նիլէ Վօլէյին
(երկիր և Ազատութիւն) իբր յաջորդ պիտի ըլ-
լայ, և այս խափանեալ թերթին ստանձնող
բունքները պիտի պաշտպանեն :

Սիմայէն հասած հեռագիր մը կ'իմացունէ
թէ, Պիրմանիստանի և Անգլիոյ մէջ եղած յա-
րաբերութիւնը խիստ զրոյացած են անգլիական
գործակալին մէկեկէն ի վեր :
Պիրմանիական իշխանութիւնը արդէն ընդ կը
յարուցանեն անգլիական նաւահրկիւթեան դէմ
ի Ռանկուն, և անտեղ արհամարհանք մը կը իր-
ջունեն առ Անգլիա, որմէ կրպշակուի թէ
Անգլիացիք Պիրմանիստանի հետ ևս կուզին պի-
տի բռնուին :

Կ'ապահովեն թէ, բազմութիւ պաշտօնեաներ
Քրասնապը ձգելու գաղափարը կըստման :
Բազմութիւ Պոնդեր մտադիր եղանակէ, քաղ-
թերթ իրենց ուրիշ Հասարակագիտութիւն մը
կազմել Քրասնապի սահմաններուն վրայ, եթէ
իրենց երկիրը Անգլիոյ կցուի :

ԱՆԴՆԱԿԱՆ ՀԵՂԱՍՏԱՆԸ

Քրիստոնէական կառավարութիւնը Անգլիական
Հնդկաստանի տաճարական միջոցի մէջ ունե-
ցած գրութեան վրայ Սթալթիսթի մը կը հրա-
տարակէ : Անգլիական Հնդկաստանը 1 միլիոն
475,606 միլիոն տարածութիւն ունի և 240 միլիոն
258,143 ժողովուրդ որ 18 նահանգներու տակ
կը կառավարուի, այս նահանգներու ամենէն
բազմաբնակին են Պենիպ, Մաթրաս և Պոմպէյ :

Անգլիական Հնդկաստանի 1877-78 տարինե-
րու ծախուց հաշուետուարը 53 միլիոն 969,201
անգլիական ոսկի կը հասնի Այս թիւը նախորդ
հաշուետուարէն շատ է թէ և, սակայն նուազ
է այն ծախքէն որ կը հասնի 62 միլիոն 502,388
անգլ. իրացի որ 3 միլիոն 543,087 ոսկի պա-
կաս մը կը ջրունէ :

Հոյակն եկամուտէն ետեւ, ամենէն նշանուոր
հասոյթը անիոնի վրայ դրուած աւուրքն է որ
1877-78 տարիներուն 9 միլիոն 182,722 անգլ.
ոսկի հասած է, որ 74-75 տարիներու հասոյ-
թէն 1 միլիոն լիւրա աւելի է :

Այս վնասակար նիւթին առևտուրը տարուէ
տարի տոնկայի կերպիւ կը ծաւալի : Ի զուր փոր-
ձեց Չինական կառավարութիւնը որ անիոն
չմուծանէ երկնային-Պետութեան մէջ (Չինաս-
տան) և մինչև անգամ երկու հեղ պտաւերազմ
ընել ուղեց իր երկրին մէջ անիոն մուծանող-

ներու հետ : Բայց բոլոր այս ջանքերուն ար-
դիւնքն եղաւ Չինացիոց ամբողջ կարգի ան-
ձանց անիոն գործածելը :

1877-78 տարիներու մէջ Անգլիական Հնդ-
կաստանէն դուրս եղած անիոնի քանակութիւնը
12 միլիոն 374,355 անգլ. ոսկի կը հասնի :
Այս ամբողջութիւնը գրեթէ Չինաստան մտաւ :
Կրնայ ըսուիլ թէ, անիոնի առևտուրը Հնդ-
կաստանի վաճառականութեան ամենէն նշանա-
ւոր ճիւղը կը կազմէ վաճաղի անիոնի ընդհանուր
առևտուրի հինգերորդ մասը Հնդկաստանի հա-
մար կըլլայ, ծաւալի է տեսնել այսպիսի բարո-
յականի ներհակ մշակութեան մը դատապար-
տել բերրի երկիրներ, որք կրնային ընդունել
ուրիշ մշակութիւն մը, աւելի օգտակար մարդ-
կութեան ընդհանուր շահուց :

Անիոնէն ետեւ Հնդկաստանէն դուրս ելող
գոյքերուն մէջ ամենէն կարեւոր տեղը կը բռնեն
բամբակը, բրնձը, թէյը և արմաթը : Իսկ
ներս մտնողն է բանուած բամբակը, որ առա-
ջին տեղը կը բռնէ : Անգլիական Հնդկաստանը
1877-78 ընդունած է բանուած բամբակ
17 միլիոն անգլ. իրացի արժողութեամբ որ գա-
ցած է Անգլիայէն :

Հնդկաստան մտնող գոյքերը Քրիստոնէական և
ն. իրանական միացեալ-թաղաւորութեանէն
յառաջ կուգան, որով 56 միլիոն դոմարէն 45
միլիոն իր երկիրը կը մտնէ : Իսկ Գաղղիա որ
երկրորդ կարգի տեղ մը կը բռնէ 571 միլիոնի
առևտուր մը ունի :

Անգլիական Հնդկաստանի զօրաբանակին
ծախքը ամենէն շատ է, 1878ին ծախքը 16 մի-
լիոն տեղի եղած է : Նախորդ տարիներու հետ
բաղդատելով 1 միլիոն աւելցած է այս ծախքը :
Գաղաքական ծախքը երթալով կ'աւելնայ ամեն
տարի, 1878ին ծախքը 3 միլիոն 319,673 ոսկի
հասած է : Հասարակաց կրթութեան համար
եղած ծախքը 733,020 ոսկի կը հասնի :

Գաղղիա, որ Տաճկաստանի հետ ունեցած ա-
ռուտուրով 1874-75ին 170-187 միլիոն ար-
ժողութեամբ գոյք առած և 75-82 միլիոն
գոյք տուած էր, նշանաւոր կերպով նուազած
է այս դոմարը 1877ին :

Այս վերջին տարուան մէջ 159 միլիոնի գոյք
առած և 36 միլիոնի գոյք տուած է :

Գիւտար գոյքերը զօրս կը գնենք Տաճկաս-
տանէն հետեւեալներն են-Սրմուր 52 միլիոն
Ֆրանք. իւզատու հունտեր 19 միլիոն, մետաքս
17, 12 միլիոն. բուրդ 15 միլիոն, 25 թ 8 1)3 մի-
լիոն. մորթ 6 1)2 միլիոն. չոր խօտեղէն 6 մի-
լիոն. սեղանի պտուղ 6 միլիոն. բամբակ 3 1)2
միլիոն. ձաւար (պուրկուր) 3 միլիոն. իւզատու
պտուղ 2 միլիոն, դանազան բուսեղէնք 2,700,000
սպունգ 1,600,000, թիւան 1,100,000. ծխախոտ
883,000. Կրկայի սկիւր 600,000. գորգ մեղրամոմ,
եղջիւր, անիոն, ասաղձի փայտ, գինի, բժշկա-
կան խտեր և այլն :

Տաճկաստանի մեղմէ գնած գոյքերն հետեւե-
ալներն են-Շաքար կոնսաձ 4 1)2 միլիոն ֆր-
եփուած մորթ 4 1)2 միլիոն. բրդեղէն երկրներ
3 1)2 միլիոն. հում մորթ 2 1)2 միլիոն. մետաք-
սեղէն 2 միլիոն. զարգուց վերաբերեալ զանա-
զան հիւսուածք 2 միլիոն. հագուստ և ճերմա-
կեղէնք 1 1)2 միլիոն. մետաղային շինուածներ
և գործիքներ 1,247,000. մետաքսեղէն ժապա-
ւէններ և երկր 1 միլիոն. թուղթ, քարտէզ,
փորագրութիւնք 1 միլիոն. ապակեղէնք 948,
000. կարմրուկ (գըրմըլ) 825,000. գինի 572,000
մորթ և և կաշի շինուած բաներ 760,000. թիւա-
նէ(վաշ) հիւսուածներ 600,000. կապար 216,000.
մում 317,000. գետնախնձոր. փայտեայ շինուած-
ներ, դեղեր, կահկարասիք և այլն :

Գալով Ֆրանսայի և Տաճկաստանի մէջ եղած
նաւարկութեան, մեր նաւահանգիստներէն և
կող 671 նաւ 320,000 թնօ գոյք կը կրկնէ : Իսկ
մեր նաւահանգիստներէն դէպի Տաճկաստան
գացող 312 նաւ 219,433 թնօ կը կրկնէ :

Ասի 1877ին հաշիւն է, իսկ 1878ին մաքսային
հաշիւներու սթալթիսթիքը դեռ արտաքրած
ուած չէ :

(Լա Բալլի)

—Խորհն Նարայէյ սրբազան վեբթօր Հիւկոյի նամակ մը զրկած ըլլալով Հայաստանի նկատմամբ իր ունեցած զգացմանց մասին, այս վերջինը ևս նամակով կը պատասխանէ առ գերա-նարայէյ, պատասխանը զոր յանձնած է վ. Հիւկո՝ իշխանուհի Լուսինեանի, ԿԼՊ լրագրին մէջ հրատարակեալ է, այսպէս.

Բարիդ, 18 Նոյեմբեր

Մեծա. պաշտօնակիցդ իմ,

Մենք երկու բանաստեղծ եմք, իսկ ես կը-յաւելում թէ, մենք երկու հոգեւորական եմք. այսու ամենայնիւ ձեր բանաստեղծական մարդ-մը ըլլալը բաւ է ինձի, այս պատեհութեամբ կրնամք ձեռք ձեռքի տալ. Ձեր նամակէն ըզ-զածուեցայ և եղբայրութիւնդ իմ սէրս զար-թուցած ըլլալուն համար շնորհակալ եմ. Հայ-աստանի վրայով բան կը հարցունէք ինձի, դուք ինձմէ լաւ գիտէք, այլ ձեր գիտցածը ես ալ ստուգելով ինքզինքս երջանիկ կը համարիմ. Անցեալին նայող ազգերը պիտի կորուսին, իսկ ապառնին դիտող ազգերը պիտի ապրին. Հայաստան պէտք է օրինակ առնել ձեզմէ. նա արդէն քաղաքակրթութեան ճամբուն մէջ է. Գիտեմ ձեր արժանեաց մեծութիւնը, Ձեր բաղդին մեծութիւնը՝ ձեր մտքին մեծու-թեան հաւասար կը տեսնեմ. Հին ազգութեանց արին և նոր ազգութեանց խելք կայ ի ձեզ, Շատ հեղ ձեր վրայով կը խօսիմ իշխանուհի Լու-սինեանի հետ. Երբ Բարիդ գաք սրտերնիս ի-րարու պիտի հանդիպին և ձեռքերնիս զերար պիտի սեղմեն. Վ. Խիւկո

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՈՎՍԻԻ

Աշխարհածանօթ նկարչին սքանչելի պատկեր-ներէն քանի մը հատ, որ զետեղուած են առե-նէ մը ի վեր եւրոպական—գաղինոյի մէջ ի տես հասարակութեան, արդէն ծախուած, ըլլալով պիտի վերցուն յառաջիկայ երկուշաբթի, 26 Նոյեմբեր. Ուստի մեր ազգայիններէն հետա-քրքիրք, որք տակաւին չեն տեսած տասնեւին-ներորդ դարու այս հանճարին զմայլելի գործքը արժան է որ փութան հրաշակերտներ տեսնե-լու. Այս ծանօթութիւնը տալով աւելորդ չեմք համարիր, տեղւոյս գաղղիական թերթի մը մէջ հրատարակեալ նկարագրական յօդուածէն քա-նի մը տող յառաջ բերելու. . . Ա. հանգիստ-տես մը պիտի զգայ անշուշտ նկարի ճաշակը զարմնով յինքնան, Այլազովքիի սքանչելի պատկերները տեսնելով, որոց մէջ մարդ, բնու-թիւնը գիտելով ջրով և օդով, չէ կարող զար-մանալէ գաղղի, Լեբինք, ծով, երկինք. ասոնք պէտք են ահա իրեն պատկեր մը յօրինելու համար. Ձանոնք տեսնելով, կարծես թէ արշալոյսն ու այգը կը ծնին. երազներու աշխար-հը կը թուի մարդ՝ երբ անոնց մէջ նկարուած լուսնի ճառագայթները տեսնելով անդ, չէ կարելի չ'արգահատիլ իրապէս. մարդուս աչ-քերը կը խաղին վերջապէս արեգակին մարը մտնելը գիտելով. Տեսէք սա արեւին նինջը, սա գիւղացին որ իր արօրին վրայ հակած արա մը կը հերկէ որ իրեն ընտանեաց միակ յոյ-սըն է. Կ'աշխատի, կը տքնի, պահ մը քրտինք պիտի ծորին ճակատին վրայ. Ինչ գար-մանք, երբ տեսնէ ոք Մարմարայի Ժոզէն լեռնա-լեռնային. Նկատեցէք, ինչպէս ամեն բան վճիռ և պայծառ է, ինչպէս ամեն ինչ հանդար-տութիւն կը ներշնչէ. Արեւելքն է այդ իր խոր-հուրդներով, մտախոհութեանց իշխանութիւն է այդ Աւետիկայ երկրէն է այդ, միով բանիւ Կ. Պօլսն է գա իր միտքներով, որոց վրայ զարթուն տէր-վիշներ մաղթանք կ'ուղղեն առ Յաւիտենական. Ձմայրեցէք սա գիւղերային ջահը տեսնելով որ ծովուն մէջ կը պլլալայ և կարծես թէ իր համը ձայնով կըսէ Վելլա՛մ.

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Անցեալ չորեքշաբթի իրիկուն տեղւոյս Աւստ-րիական ընդհանուր հիւպատ տը Հէրցֆելտ ճաշ մը տուաւ Աւստրիական նաւատորմի իր հրամա-նատար Մ. Խիւկոյանի. Հոն ներկայ գտնուողաց

մէջն էր նաև Ֆրիդլիպ Կոնստանտին Կոնստանտին

—Անցեալները հաճի Սալի հանունով տաճիկ մը յոյն մը կը զարնէ սուրով, վրէժխնդրութեան մը գրգռեալ, քիչ մը ետքը կը մեռնի. Մար-դասպանը նոյն իրիկունը կը բռնուի.

—Նոյպէս ուրիշ սպանութիւն մը ևս տեղի կունենայ երկու անհատից մէջ հաճի Սթեփո փողոցին մէջ.

—Պիթ—բազար կեցող յոյն երիտասարդ մը ինքզինքն սպաննել ուզելով երկու հարուած տուէր է գանակով իր մարմնոյն. վերաւորը յունաց հիւանդանոցը կը փոխադրուի. Այս յու-սահատական գործին շարժառիթ եղած է կըս-ուի իր տիրոջ հետ ունեցած մէկ կռիւն.

—Կերակի առաւօտուն կանուխ երբ ծերուկ կին մը եկեղեցի կ'երթար, գողերէ կը բռնուի, որք ուսին վրայ ունեցած շալը կը յափշտակեն.

—Անցեալ երկուշաբթի Սթրաֆօ—խանո ըս-ուած մայրանին վրայ գողերը անցորդ մը բռն-նելով քսակը, ժամացոյցը և ոսկի շղթան կ'առ-նուն. խեղճ կողոպտեալը որ տրտունջ յայտ-նած էր գողերուն, այս ըրածնուն համար, ի պատիժ տրտնջեան դաւադարի քանի մը հար-ուածներ կուտան նմա.

—Սէնթ—Անթուան հիւանդանոցին ետեի փողոցին մէջ շաբաթ գիշեր գողերը անցորդ մը կը բռնեն, սակայն տեսնելով որ ոչինչ ունի առ-նելու, հետեւեալ կերպիւ կը պատժեն զինքը. նախ գլխարկը առնելով դանակով կը ծակէ կեն և կընեան, յետոյ կը հանեն յաջորդաբար բալթօն, բանթալօնը և մուճակները զորս բը-զետելով կը հրամայեն մարդուն որ հեռանայ.

—Կերակի օր շոգենաւու մը մէջ բեռ դուրս հանուած միջոցին սնտուկ մը կ'իյնայ և նաւա-տիներէն մին ծանր կերպով կը վիրաւորէ. վի-րաւորը հիւանդանոց կը փոխադրուի.

—Երկուշաբթի առաւօտ երկու Նաթալիցիներու մէջ խաղի պատճառաւ կռիւ մը ծագելով մին զմիւսը սուրով 4 տեղէ կը վիրաւորէ. վի-րաւորը հիւանդանոց տարուեցաւ անյուսալի վիճակի մէջ.

—Կերակի իրիկուն ժամը 7ին Այի—Նիքօլա թաղին մէջ կռիւ պատահելով, Սաղըզի յոյն մը վտանգաւոր կերպով կ'վիրաւորի ձախ կողմէն.

—Պայրամին Նիֆի մէջ անկարգութիւններ ծագելով, միտիւրը կը տարաւորի իւրիւրէն զօրու-թիւն ուզելու, այս անկարգութեան տեղի կու-տան քանի մը միլեւանդ մարդեր, որք բանտին վրայ յարձակելով իրենց ընկերներէն մին կար-ձակեն և շրջակայքը կըցրուին.

—Իրէկ առաւօտ Այի—Պօլսին յունաց ա-թուաւորներ եկեղեցւոյ մէջ Ձիւլ Ապա—աթ Գոլ-բաշէ շարականը երգուեցաւ իւստիոյ կայսեր կենաց փրկութեան համար, զոր դաւաճանու-թեամբ սպաննել փորձած էին Նիհիլիսթները Լիվատիոյ և Մոսկուայի մէջտեղ եղած երկա-թուղւոյն մէջ.

Մանրամասն տեղեկութիւններ չկան դեռ, սակայն կը թուի թէ դաւաճանք տեսակ մը (յանկարծ պայթող) Գոլբաշէի մէջ տե-ղաւորած պիտի ըլլան, որ պիտի պայթէր կայ-սերական կառավարութեան սրացած ժամանակ.

Բոլոր տէրութեան հիւպատները, նոյնպէս ուրիշ բարձրագիւր անձինք, և խուռն բաղմու-թիւն մը ներկայ էին յունական եկեղեցւոյ մէջ կատարուած այս կրօնական արարողութեան.

—Ճիւղորդարի եպիսկոպոս գերա. Տ. Ստեփ-ֆորոս քանի մը օրէ ի վեր քաղաքս հասած է. Անցեալ կիրակի օր Պաւլոսպատ աւանի անդլի-ական եկեղեցւոյ մէջ կրօնական արարողութիւն մը կատարեց Նորին եպիսկոպոսութիւնը զանա-զան պաշտօնատեղեաց այցելելէ ետե պատուեց նաև մեր առաջնորդարանը Նորին Գերապատ-ուութիւն Առաջնորդ սրբազանին այցելութիւն մը տալով.

—Փրկալէմեան արժա. Դեռնգ վարդապետ քաղաքս հասաւ դէպի Հայաստան ըրած ճամ-բորդութենէն.

—Պէյքըր բաշա քաղաքէն անցաւ իսկէնտէ-րուն գայած ժամանակ, որոյ կընկերակցէին Ձմիւռնիոյ ոստիկանութեան նախկին հաշարա-

պետ Թահիր Պէյ, Սիւլէյման Պէյ և այլք.

—Աւստրիական նաւատորմի յառաջիկայ շաբթու պիտի մեկնի Ձմիւռնիոյ ծոցէն. կրտս-թէ պիտի այցելէ նաև Հադիս, կրտսէ և այլ-քանի մը արշիպեղագոսեան կղզիներուն.

—Տեղական կառավարութիւնը խիստ միջոց-ներ ձեռք առած է Տաճիկ թերթի մը հոս տա-րածուելուն առջին առեւելու համար. այս թերթը իսթիգրապ (նոսրագոյ) կը կոչուի և կը-տպագրի Նաթալի մէջ, որոյ լոմբագրողն է Այի Պէյ անուն անձ մը.

—Երէկ գիշեր, Հիսար—Ճամիսին առջև Պէ-տահաթ խանէն հրդեհ մը ծագելով 35—40/չափ խանութ հոյ ճարակ ըրաւ. կրակը գիշերուն ժամը 10ին առնենք սկսելով երկու ժամը շափ տեղեց.

Շաբթու մէջ առ Աստուած փոխեցան Ձմիւռ-նիոյ պատուաւոր ընտանիքներէ երկու ծերունի անձինք, այսինքն մահտեսի կարապետ աղօ Տա-վութեան, եղբայր հանդուցեալ Տալուլ խանի, և Արիկ աղա Աղազարեան, եղբայր հանդուցեալ Խաչատուր Աղազարեանի. Երէկ ևս բարե-պաշտ և առաքինի անձինք էին, թողած են նաև տղաւորական յիշատակներ.

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Աֆիօն.—Քանի մը շաբաթէ ի վեր այս եր-թին առեւտուրը նուազած է. վերջին շաբթու 33 կողով ծախուեցաւ ընդամենը ի դին 145—148 ղուրուչի չէքին.

Բամսակ.—Իսկերը բարձրանալու վրայ են, գրեթէ 200 կենդինար ծախուեցաւ մեքենայով մաքրուած տեսակէն 410—415 ղուրուչի.

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱՆԻԹԻՆԻՔ

ՆՈՐ ՔԵՐԹՈՒԱՆՆԵՐ

Պ. Պետրոս Խ. Թերղիանի, Այիքէտ տը Միւ-սէի բանաստեղծութիւններէն ընտրանք թարգ-մանած նոր քերթուածոց Բ. տետրակը ի լոյս ընծայուած ըլլալով, կը ծախուի թարգմանչի-քով, Պրանկայ թաղ թիւ 51. Պ. Պետրոս Խ. Թերղիանի թարգմանութեան մէջ ունեցած յա-շիղակութիւնը յայտնի է գրասէր ազգայնոց, վասնզի շատ առիթներով փորձուած է նորա-քաջ հմտութիւնը թէ ի հայ և թէ ի գաղղի-րէն լեզու, ուստի, անշուշտ քաղցր ոճ և հա-ւատարմութեամբ թարգմանութիւն մը պիտի տեսնէ ընթերցողը սոյն քերթուածոց մէջ. ի ծաւա-լումն գրականութեան և ի քաջալերութիւն լծարգմանչին կը հրաւիրեմք զազգայինս մէյմէկ օրինակ ունենալ անկէ.

ՃԱՇԱԿ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ

Ծաղկաբաղ աշխարհիկ լեզուէ, հանգերն գրական, պատմական, կենսագրական եւայլ ծանօթութեամբք.

Այլապատիւեաց Ա. Պիւլիքէն

Սոյն գրքիցը արժան է որ ամեն ուսանողնու-րու ձեռքը գտնուի, ոճի և նիւթի ընտրութիւն մէջ վարժուելու համար. կը պարունակէ իր մէջ Արիւստի, Արիւստի, Պէյքիլիթաշիանի, Նարան-գեանի, Խորէն Նարայէյի և այլ քանի մը ազգ-գրիչներու ոտանաւոր և արձակ գրութիւնները տեղաւոր ևս համառօտ կենսագրութիւններ և ծանօթութիւնք կը գտնուին.

ՊՕՒԱԶՈՒ ՏԱՄԵՐԵԱԿԸ

Սոյն համալուաւոր գործը, որ զուարճա-լի մանրամասնութեամբ ժողովածոյ մ'է արդէն եւ-րոպայի մէջ ամեն լեզուներու թարգմանուած ըլլալով վերջին օրերս ընտրանք հայերէնի ալ թարգմանուած ու հրատարակուած է.

Դին երկու հատորին 1 արծաթ մէքիտիւն.

Տէր Լուսինայ

Պ. Լուսինայ Գ. Պաւլապէան

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐՇԱԼՈՒՍՈՅ ԱՐԵԱՏԵԱՆ